

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒՍԹՔ Ի ԿՈՆԴՍԱԿԱՅ ՎԵՆ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

### Հայրապետական անօրինութիւնք.

Կոնդակ յանուն Կեր. Տ. Յուսիկ եպիսկոպոսի ընդ որում յղեցաւ պայմանագիր շահագործման կալուածոյն Մարցայ, ի կոնյ պայման ընդ զիւզանտես պ. Շահպաղեանի. թ. 1066:

— Յանուն Կոնսիստ. Արցախայ, որով ազատ կացուցան ի պատճոց միարանք Մեղրեցւոց եկեղեցւոյն Շուշոյ՝ Մինաս և Խորէն քահանայք. թ. 1068:

— Յանուն Տ. Տրիփոն վարդապետի, որով կարգեցաւ ի վանահայր ս. Ստեփաննոս վանուց Գարաշամի որ ի Պարսկաստան. թ. 1074:

— Յանուն Կոնսիստ. Արաստանի, որով պատուիրեցաւ թոյլատրել Կոմիտաս քահ. ի Բարվանսարայ գեղջ պաշտել զքահանայութիւն իւր. թ. 1093:

— Յանուն Հոգարարձութեան գպրանոցին Երեանայ, որով կարգեցաւ ի պաշտօնակատար Տեսչի գպրանոցին պ. Սարգիս Տ. Գարբէլեան. թ. 1102:

— Յանուն Տ. Գէորգ Տ. վարդապետի նալրանդեան, որով կարգեցաւ ի վանահայր ս. Թադէոս Առաքելոյ վանուցն Արտազու. թ. 1104:

— Յանուն Բարձր. Տ. Տեսչի Հոգևոր ձեմարանի Մայր Աթոռոյ, որով պատուիրեցաւ ընդունել զքննեալ աշակերտս ի Հոգևոր ձեմարան Մ. Աթոռոյ. թ. 1107:

— Յանուն Տ. Մկրտիչ ա. քահ. ի Առաջնորդական Տեղապահին Գալբրիժոյ, յարգս

պաշտպանելոյ զդատ Եկատերինեայ Աթոյեան Տփիսիսեցւոյ ընդ ձեռն հիւպատոսարանին Սուսայ, որ ի Գալբրէժ. թ. 1122:

— Յանուն Միացեալ ընկերութեանց Հայուհեաց Ատրպատականի և Գալբրիժոյ, որով հաստատեցաւ միացեալ ընկերութիւնն. թ. 1123:

— Յանուն միարանից Մ. Աթոռոյ Կեր. Տ. Արիստակէս արքեպիսկոպոսի Դաւթեան, Տ. Յովհաննէս եպիսկ. Երրակունւոյ և բարեշնորհ վարդապետացն Միթթարայ, Կարապետի և Եղիշէի և միարան Գալուսա Տ. Մկրտչեանի, որք ընտրեցան ի Յաննաժողով շինութեան նոր վեհարանի ս. Էջմիածնի. թ. 1125:

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով յաճեցաւ ի անօրինութիւն նորին դործ պսակալու ծութեան եղիպտոցի սուսահայտակ Պետրոս Հալիպ բէլի ծօրժ ընդ կնոջ նորա Ծօրթիւնի. թ. 1127:

— Յանուն դորձակալ Տ. Աբուն վարդապետի և երկուց երեցփոխանաց եկեղեցեաց Բաղուայ, յարգս յատկացուցանելոյ ի տարին 700 բուրլի յեկեղեցական զումարայ ի թոշակ շնորհ. ներսէս ւարկաւազի միարանի Մ. Աթոռոյ. թ. 1136:

— Ընդհանրական յանուն ժողովրդեան թեմին Ատրպատականի զհաստատութեան Բարձր. Տ. Եղիշէ Տ. վարդապետի յառաջնորդ թեմին. թ. 1143:

— Յանուն Կեր. Տ. Թեմակալին Բեաւարիոյ ներսէս Արքեպիսկոպոսի, որով պատուիրեցաւ առնուլ զամենայն հաշիւս և զդորձըս կալուածոցն Գիշնէի ի Տ. Տիրայր վարդապետի և զալ վերջնոյս ի Մ. Աթոռո. թ. 1190:

— Յանուն Բարեշնորհ Տ. Մամբէ վար-

դապետի յաղազս յանձնելոյ Տ. Մարտիրոս աւագ քահ. ի զամենայն դոյս և զհաշիւս վանուցն Հառիճոյ և մեկնելոյ ի Տփլիս. թ. 1195:

— Յանուէն Գեր. Առաջնորդին Հայոց Ամբրիկայի որով լուծեալ համարեցաւ պատին Զմիւռնիացի Սարգսի Յովաստիան ընդ Ուսաննայ կնոջ նորա զրկելով զայրն յիրաւանց վերստին ամուսնութեան իրրև զմեղաւոր՝ ըստ ցուցման Գեր. Տ. Թեմակալին Զմիւռնիոյ Մելքիսեդէկ եպիսկոպոսի. թ. 1234:

— Յանուէն Կոնստ. Արցախայ, որով պատուիրեցաւ վաւերական համարել զպատին Շուշեցի Լեոնի Խարախանեան ընդ Սաթիւկայ Գանիէլեանց. թ. 1262:

— Յանուէն Կոնստ. Վրաստանի որով թոյլատրեցաւ Տիկին Բօրնիսլաւի Օսարովսիւոյ մտանել յերկրորդ ամուսնութիւն. թ. 1285:

— Յանուէն Արժ. Տ. Գիւտ. ա. քահ. ի Աղանեան, որով յանձն եղև նմա քննել զզործ պատկալուծութեան Աղէքսանդրի Բէհրութեան Շէրիֆնիկեանց. թ. 1288:

— Յանուէն Կոնստ. Վրաստանի որով թոյլատրեցաւ ժառանգաց զերդաստանին Զաղէթեանց թաղել ի գաւթի եկեղեցւոյն կառուցելոյ ծախիւք իւրեանց ի Ղազախ. թ. 1293:

— Յանուէն Բարեշնորհ. Տ. Աբսէն վարդապետի՝ զործակալի, և պ. պ. Երեցփոխանաց երկուց եկեղեցեաց Բագուայ, յաղազս տալոյ ի տարին 500 բուբլի թոշակ ուսանող Գեորգայ Կարապետեան. թ. 1353:

— Յանուէն Հոգ. կառավարութեան Կարուց, որով պատուիրեցաւ թոյլատրել պատկել յերկրորդ նուագ զտաճկահայատակ Մեյլիքն Սահակեան, ի պատճառս ուրացութեան առաջին կնոջ նորա զհաւատն քրիստոնէական և յարելոյ ի մահմետականութիւն. թ. 1379:

— Յանուէն Կոնստ. Շամախոյ, որով հրամայեցաւ զոհացուցանել զոմանս ի քահանայից Բագուայ յաւելմամբ ծխոց. թ. 1381:

— Յանուէն Կոնստ. Վրաստանի որով որոշեցաւ ոռձիկ Բարեշն. Տ. Գարեգին վարդապետի ի տարին 1400 բուբլի. թ. 1384:

— Յանուէն Կոնստ. Շամախոյ, որով պատուիրեցաւ վաւերական համարել զպատին Լեոնի Մանուէլեանց ընդ Սանդխոյ Կարձա-

բաղուկեանց. թ. 1395:

— Յանուէն Կոնստ. Վրաստանի որով հրամայեցաւ թոյլատրել պատժեալ Զաքարիայ քահանայի առնել քահանայադործութիւն, բաւ համարելով զհնդկաստանամեայ ապաշխարութիւն նորա. թ. 1418:

— Յանուէն Կոնստ. Վրաստանի որով պատուիրեցաւ թողուլ ընդ հողեր անսուլութեամբ վանուցն Հաղարծնոյ զՌիլիջան, զՊօղոսըիխայ, զԶարխէշ և զԳօշ Մխիթար զիւրօրայս՝ իրրև զվիճակ վանուցն Հաղարծնի. թ. 1431:

— Յանուէն Առաջն. Խորհրդարանին նոր Զուղայու զկարգմանէ Գեր. Տ. Սահակ եպս. ի Այվատեան ի թեմակալ վիճակին. թ. 1436:

— Ընդհանրական յանուէն Հայ ժողովրդեան Պարսկաստանի և Հնդկաստանի, որով յայտնեցաւ զկարգմանէ Գեր. Տ. Սահակ Արքեպիսկոպոսի Այվատեան ի թեմակալ վիճակին և ս և զչնորհելոյն նմա զբարձր պատիւ արքեպիսկոպոսութեան. թ. 1438:

— Յանուէն Տ. Կիւրեղ վարդապետի Փոխանորդին Կարուց, որով լուծեալ համարելով զպատին Տաճկահայատակ Կիւրղի Ծառուկեան ընդ կնոջ նորա Գիւլիզարի, ի պատճառս քսան և մի ամեայ բացակայութեան առն՝ ըստ ցուցման օրագրոց ս. Սինօղի, արտօնել կնոջն զվերստին ամուսնութիւն. թ. 1439:

— Յանուէն Գեր. Տ. Սարգիս եպս. ի վանհօր Սեանայ, որով պատուիրեցաւ ձևանադրել ի քահանայ զՄկրտիչն Տ. Թադէոսեան ի հովիւ հայ ժողովրդեան, որք բնակին սկսեալ ի Վարօնէժ կայարանէ ցՎաճիսիսի, և ի գիւղօրայս. թ. 1464:

— Յանուէն վիճ. Կոնստ. Բեսարաբլոյ, որով պատուիրեցաւ թոյլատրել պատկել զՍերովբն Միրաբեան ընդ ապօրինի կենակցին իւրոյ Եղիսարեթի Փարսաղանեանց, յորոց ծընեալ են հինգ զաւակունք. թ. 1488:

— Յանուէն Գեր. Տ. Թեմակալին Եղիստոսի Յովսէփ եպս. ի Այվաղեանց յաղազս առնելոյ բացատրութիւն ի Տիկին Արուսեկէ Քէմհաճեան զզործոյ պատկալուծութեան նորա. թ. 1492:

— Յանուէն Ա. Ս. Պատրիարքի Հայոց Թուրքիոյ Տ. Մարգարայ Արքեպիսկոպոսի, որով

յանձնարարեցաւ ստուգել զրողոքն Ներսէս անուն աղգայնոյ զկնոջէն իւրմի, և եթէ ճշմարիտ իցի՝ թոյլատրել առն մտանել ի նոր ամուսնութիւն: լուծեալ համարելով զպսակն նորա ընդ անառակ կնոջն. թ. 1426:

— Յանուն Գեր. Տ. Փոխ. Թեմակալին Երեանայ Սուքիաս Արքեպիսկոպոսի որով պատուիրեցաւ հրաւիրել ի պաշտօն հոգաբարձութեան զանձնափոխանորդս՝ ի տեղի հրաժարեալ հոգաբարձուաց Հոգևոր դպրանոցին Երեանայ. թ. 1504:

— Յանուն Գեր. Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսի որով յայանեցաւ զկարգմանէ Տիրայր վարդապետի ի փոխանորդ վիճակին Աղէքսանդրապոլու. թ. 1514:

— Յանուն Բարեշն. Տ. Տիրայր վարդապետի Փոխանորդին Աղէքսանդրապոլու: որով պատուիրեցաւ վերստին քննել զգործ պսակալուծութեան Արրահամու Շէկիրեան Աղէքսանդրապոլոցւոյ ընդ կնոջ նորա Տիրուհւոյ. թ. 1520:

— Յանուն Բարեշն. Տ. Սահակ վարդապետի Բաղդասարեան, որով կարգեցաւ ի վանահայր ս. Թովմայ Առաքելոյ վանուցն Ագուլեաց. թ. 1533:

— Յանուն Բարեշն. Տ. Գարեգին վարդապետի որով պատուիրեցաւ հսկել ի վերայ դասաւանդութեան կրօնի հայ մանկուոցն ի պետական ուսումնարանս Տփլիսեաց. թ. 1556:

— Յանուն Բարձր. Տ. Թեմակալին Առբրպատականի Եղիշէ Տ. վարդապետի որով լուծեալ համարեցաւ պսակն Արեղնադանի Մովսիսեան Փայաջուկ զեղջ Սալմաստայ ընդ անյայտացեալ առն նորա Սահակայ Սարգսեան և զրկեցաւ վերջինս յիրաւանց վերստին ամուսնութեան, ըստ վկայութեան նախկին թեմակալ Գեր. Տ. Սահակ Կոստ. թ. 1558:

— Յանուն Սղանականի Տեսչի Հոգևոր ձեմարանին Մ. Աթոռոյ՝ Բարեշնորհ Տ. Յուսիկ վարդապետի որով կարգեցաւ ի մատենադարանապետ Մ. Աթոռոյ. թ. 1562:

— Յանուն Հոգ. կառավարութեան Ասրուց, որով լուծեալ համարեցաւ պսակն Պարսկահայտակ Մարտիրոսի Սաեփաննոսեան ընդ պոռնիկ կնոջ նորա Աննայի Խաչատրեան և թոյլատրեցաւ առն մտանել ի նոր ամուսնու-

թիւն: ըստ ցուցման վիճակ. Ատենին Ատրախանայ և օրագրոց Սինօղի ս. Էջմիածնի. թ. 1564:

— Յանուն վիճ. Կոնստա. Երեանայ, որով լուծեալ համարեցաւ պսակն տաճկահայտակ Մարտիրոսի Կիրակոսեան ընդ կնոջ նորա Մարիամու Մանուկեան՝ զրկելով զկինն յիրաւանց վերստին ամուսնութեան, ըստ ցուցման օրագրոց Սինօղի ս. Էջմիածնի. թ. 1565:

— Յանուն Կոնստա. Վրասսանի որով լուծեալ համարեցաւ պսակն տաճկահայտակ Բաղդասարայ Տ. Յովսէփեան ընդ պոռնիկ կնոջ նորա Վարսենիկի Մկրտչեան՝ զրկելով զկինն յիրաւանց վերստին ամուսնութեան, ըստ ցուցմանց օրագրոց Սինօղի ս. Էջմիածնի. թ. 1567:

— Յանուն Գեր. Տ. Թեմակալին Զմիւռնիոյ Մեղքիսեղէկ Եպիսկոպոսի որով լուծեալ համարեցաւ պսակն Բժիշկ Սաեփանայ Թորաթլեան ընդ կնոջ նորա Մարիամու, զրկելով զերկոսեանս և ս յիրաւանց վերստին ամուսնութեան, իբրև զմեղապարտո՝ ըստ ցուցման Գեր. Տ. Թեմակալին. թ. 1569:

— Յանուն Հոգաբարձութեան Ներսիսեան դպրանոցին, յաղաքս տալոյ կենսաթուշակ բաղամեայ ուսուցչի դպրանոցին պ. Գեորգայ Բարխուդարեան ի տարին ոչ թէ 360 բուրլի, այլ վեց հարիւր բուրլի. թ. 1570:

— Յանուն Տ. Խոսրով վարդապետի Փլլթակեան, որով կարգեցաւ ի վանահայր վանուցն Հաղարձնոյ. թ. 1577:

— Յանուն Ամեն. Պատրիարքին Հայոց Թուրքիոյ Տ. Մաղաքեայ Արքեպիսկոպոսի որով լուծեալ համարեցաւ պսակն Յովհաննու Պարոնիկեան ընդ պոռնիկ կնոջն նորա Մաքրուհւոյ՝ զրկելով զվերջինս յիրաւանց վերստին ամուսնութեան. թ. 1587:

— Յանուն գործակալին Բաղուայ Բարեշն. Տ. Արսէն վարդապետի, որով թոյլատրեցաւ նմա ծախսել յեկեղեցական եկամտից ի տարին 4800 բուր. ի թոշակ երգեցիկ եկեղեցական խմբի. թ. 1674:

— Յանուն վանահօր վանուցն Տաթևու Տ. Ներսէս վարդապետի, յաղաքս ընդունելոյ ի միարան զՏ. Խորէն արեղայ. թ. 1680:

— Յանուն Սինօղի ս. Էջմիածնի, որով պատուիրի բաժանել զպսակադրամս վիճակին

Երեւանայ ընդ երիս գաստարգոս՝ ի հարուստ ի միջակ և յաղքատ. թ. 1682:

— Յանուէն Գեր. Տ. Մաղաքեայ Եպիսկոպոսի Տերունեան, որով թողյատրեցաւ նմա գնայ ի Տփիսիս և անտի յարաստահման ի բժշկիլ. թ. 1920:

— Յանուէն վարչութեան Տպարանի Մայր Աթոռոյ, որով պատուիրեցաւ առ Եկեղեցական ինչ ինչ գրեանս վասն աղքատ գիւղորեից ն. Զուգայրու ի Պարսկաստան. թ. 1934:

— Յանուէն պ. Մեխակայ Կ. Կոմսաղեանց Կանձակեցոյ, որով կարգեցաւ ի զանձապետ գանձանակադրանոց ս. Եջմիածնի, որ յեկեղեցիս Կանձակայ. թ. 1949:

— Յանուէն Բարեկրօն Տ. Մեծորդ քահանայի Մելեան, որով պատուիրեցաւ յայտնել տաճկահայաստակ Մինասայ Երկանեան, եթէ պատին նորա ընդ պոսնիկ կնոջն լուծեալ է և թողյատրեալ նմա մասնել յերկրորդ ամուսնութիւն. թ. 1966:

— Յանուէն բարեւէր ազգայնոց Եւրոպիոյ և կողմանցն Տաճկաստանի սակս օժանդակութեան նորոգ կառուցանելի հայ եկեղեցւոյն, որ յԱթէնք քաղաքի. թ. 1967:

— Յանուէն Գեր. Տ. Թեմակալին Պարսկ. և Հնդկաստանի Սահակ արքեպիսկոպոսի, որով արածոնեցաւ նմա թողյատրել զպսակս Ե. աստիճանի ազգակցութեանց և Ե. աստիճանի ինձամութեանց. թ. 1980:

— Յանուէն նոյն Թեմակալի, որով լուծեալ համարեցաւ պսակն Շուշեցի Յովսէփայ Յովհաննիսեան ընդ կնոջ նորա Իւզարբրի վարդանեան, յազգս գատապարտեալ զոչոյ առն տաննամկայ ժամանակաւ ի տաժանակիր աշխատանս՝ ի պատճառս զողութեան և մարդասպանութեան յիրս ռուսական Կայսերական բանակին Թեհրանայ, արտօնելով կնոջն զվերըստին ամուսնութիւն. թ. 1981:

— Յանուէն Կոնստ. Վրաստանի, որով պատուիրեցաւ առ վեցամեայ ժամանակ նախկին երեցփոխի Քամոյեանց եկեղեցոյ Տփիսեայ պ. Զալալեանցի՝ ի վճարել յինթացս այդր ժամանակի զպարտիս իւր. թ. 1982:

— Յանուէն Միաբանի Մ. Աթոռոյ Գպիր Գալստի Տ. Միլոշեան, որով կարգեցաւ ի պատասխանատու խմբագիր Արարատ ամսագրոյ

Մայր Աթոռոյ ի 1-էն Յունուարի 1902 ամի. թ. 1988:

— Յանուէն Վանակ. Կատալարութեան Մ. Աթոռոյ, որով յայանեցաւ զկարգմանէ Բարեչն. Տ. Յովհաննէս վարդապետի Գպիր վարդանեան ի վանահայր վանուց Շողակաթիս և Տ. Բաղդասար վարդապետի Բայրադտարեան ի վանահայր ս. Կարսպետ վանուցն Զանձրլոյ. թ. 2036:

— Յանուէն Փոխանորդին Աղեքս. Տ. Տիրայր վարդապետի, որով յայանեցաւ պուճմանէ պսակի Արքահամու Եկեղեցեան ընդ մկապորա կնոջ նորա Տիրուհւոյ թողյատրելով առն մասնել յերկրորդ ամուսնութիւն. թ. 2053:

Հայրապետական պարգևք.

Շնորհեցան լանջախաչք ակննակուսք Հոգեշնորհ վարդապետաց՝ վանահայր Նախավկայի վանուց Տ. Տրիփոն վարդապետի, վանահայր ս. Թադէոս Առաքելոյ վանուց Տ. Գէորգ Տ. վարդապետի, Փոխանորդին ն. Նախիջևանի Տ. Մուշէ վարդապետի և Արժանապատիւ աւագ քահանայից՝ Տ. Արսենի Բաղրատունուց և Տ. Սաեփաննոսի Սամուէլեանց, թ. 1103, 1105, 1337, 1354 և 1384:

— Շնորհեցաւ կոչումն աւագ քահանայութեան հարց քահանայից՝ Տ. Յովհաննիսի Մարտիրոսեան, Տ. Աբելի Սուքիասեան, Տ. Ղևանդի Աթանոսեան, Տ. Վահանայ Վաչէեան, Տ. Մինասայ Տ. Պետրոսեան, Տ. Խորենայ Գալլատեան, Տ. Ելիշէի Գեղամեան, Տ. Գրիգորի Մասինեան և Տ. Սիմոնի Զմշկեան. թ. 1274, 1277, 1309, 1310, 1311, 1325, 1348, 1383, և 1421:

— Մեկալան զարտօնութիւն կրելոյ զկամիլաւկայս հարց քահանայք՝ Տ. Գալուստ Աբուլեան, Տ. Սահակ Խախանեան, Տ. Ներսէս Տ. Թաչատրեան, Տ. Վահան Մամիկոնեան, Տ. Գարեգին Վուկոսեան, Տ. Մեծորդ Ասկանեան, Տ. Արսէն Մանգոպիւրեան, Տ. Գրիգորիս Երզնկեան, Տ. Դրիգորիս Մատինեան, Տ. Շմաւոն Բարսեղեան, Տ. Գէորգ Մեհրաբեան, Տ. Յովսէփ Աբուլեան. թ. 1276, 1302, 1305, 1326, 1328, 1331, 1342, 1343, 1344 1346 և 1347:

Շնորհեցան Կոնդակք քահանայական

լանջախաչից յանուն հարց քահանայից Տ. Գէորգայ Օղեանն Տ. Յովհաննիսի Իւլիաշեանն, Տ. Վարդանայ Տ. Ղևոնդեանն, Տ. Եղիշէի Տ. Աստուածատրեանն, Տ. Յուսիպ Վէրդեանն, Տ. Սահակայ Տ. Մինասեանն, Տ. Յովսէփայ Առիւծեանն, Տ. Գէորգայ Արշակունոյ, Տ. Ղևոնդի Մէհրապեանն, Տ. Գէորգայ Տ. Սարգսեանն, Տ. Կարապետի Ծաշվերդեանն, Տ. Խորենայ Խանդատեանն, Տ. Կորիւնի Պանջուլապեանն, Տ. Ստեփաննոսի Տ. Ստեփանեանն, Տ. Խաչատրոյ Փանեանն, Տ. Աղէքսանդրի Արրահամեանն, Տ. Գէորգայ Աւագեանն, Տ. Բարսիլի Տ. Բարսեղեանն, Տ. Մկրտչի Արշակունոյ, Տ. Աարգոսի Տ. Մարկոսեանն, Տ. Անդրէասայ Արշակունոյ, Տ. Պատկ քահանայի Յակոբջանեանն, Տ. Յովհաննէս քահ. նաւթիկեանն և Տ. Անանիա քահ. Նիրակունոյ. թ. 1184, 1186, 1198, 1254, 1245, 1246, 1247, 1259, 1306, 1307, 1308:

**Հայրապետական շնորհակալիք և զոհունակութիւնք.**

Կոնդակ օրհնութեան և զոհունակութեան յանուն պ. Գրիգորի Զալիսուշեանն, յաղագս աշխատութեան նորա ի գործ կառուցման արձանի աղղային բանաստեղծին Ռափայկի Պատկանեանն. թ 1171:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն Տիկին Եղիսարեթի Սուլիսանեանց, յաղագս նուիրարեութեան նորա 400 բուրլեաց ի արամադրութիւն Վեհ. Հայրապետի. թ. 1192:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն Արժ. Տ. Ստեփաննոս քահանայի Բալեանն, յաղագս ջանից նորա ի գործ կրթութեան զիւզական ժողովրդեան. թ. 124:

— Օրհնութեան և քաջալերութեան յանուն պ. խմբագրի «Համայնարան» հանդիսի Մխարայ Բաղդասարեանն. թ. 1301:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն պ. Յովհաննիսի Նաղարէթեանն՝ երեցփոխանի Եկեղեցոյն Օրհնչի, որ օժանդակեաց ծախուց ուսման ու բարակիր Մեղրոպայ Արովեանն, միարանի Մ. Աթոռոյ. 1332:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն պ. Մակարայ Թերզեանն, յաղագս նուիրարեութեան նորա ի սեփական զեանոյ իւրոյ ի պէս կառուցման հայ Եկեղեցոյ ի Մայքոս. թ. 1386:

— Օրհնութեան և քաջալերութեան յանուն Հայուհեաց բարեգործական ընկերութեան Ասխարատու, որոյ ընարեալ էր զնորին Ս. Օժութիւն ի հովանաւոր ընկերութեան իւրեանց. թ. 1387:

— Օրհնութեան և քաջալերութեան յանուն պ. Վարդերեսի Ախշեանց, երեցփոխանի ս. Աստուածածին Եկեղեցոյ ն. Նախիջևանի, յաղագս բազմամեայ հաւատարիմ ծառայութեան նորա Տանն Աստուծոյ. թ. 1396:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն Բժ. Կարապետի Փաշայեանն, յաղագս ջանից նորա ի կազմութիւն հակալքօրական ընկերութեան ի Դալթի. թ. 1347:

— Օրհնութեան և քաջալերութեան յանուն բարեհաշակ Ռեթէոսի Բէրբերեանն, հիմնադրի Բէրբերեանն վարժարանի Կ. Պոլսոյ՝ վասն յորեկինի քսան և հինգ ամեայ ուսուցչութեան նորա. թ. 1498:

— Օրհնութեան և քաջալերութեան պ. Գարեգնի Մեծատուրեանն, խմբագրի «Գութան» հանդիսի. թ. 1561:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն Ատննապետի Հոգարարձութեան Եկեղեցոյն Հայոց Սուշալա քաղաքի՝ ազնուազարմ Ասպետ Վարդերեսի Կարապետեանն Փօն Բրունգուլ, յաղագս բազմամեայ վաստակոց նորին յաղղային և Եկեղեցական գործս. թ. 1649:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն երից եղբարց Մելիք Ազարեանց, Եղիվարդ զիւղացոյց Սիւնեաց, յաղագս նուիրարեութեան նոցա Հոգ. ձեմարանի Մ. Աթոռոյս. թ. 1661:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն պ. Մկրտչի Աղաջանեանն Փանոսեանց ն. Բայաղիացոյ, յաղագս յիսնամեայ ծառայութեան նորա Եկեղեցիս քաղաքին, պաշտամամբ դպրութեան. թ. 1663:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն պ. Մարտիրոսի Գրիգորեանն Զայցեանն, յաղագս նուիրարեութեան նորա ս. Խաչ վանուց հին Խրիմու. թ. 1676:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Ատափառեայ Քանանեան, յազգս իրազործման կտակին, որ յանուն հանգուցեալ սուն իւրոյ. թ. 1748:


— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Նիկողայոսի մահաւ. Դուրզուլեան նախիջեանցոյ, յազգս նուիրարեութեան նորա մատենադարանի Հոգ. ձեմարանի Մայր Աթոռոյ ի յիշատակ հանգուցեալ հօր իւրոյ. թ. 1452:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Մովսիսի Քաւրիզեանց Ասարախանցոյ, յազգս նուիրարեւելոյ նորա զմի տոմս խաղարկութեան Ա. կարգի յանուն Հոգ. ձեմարանի Մ. Աթոռոյ. թ. 1958:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Նուշեցի պ. Իսահակայ Քաղէտեան, յազգս երկարամեայ պաշտօնավարութեան նորա իրրե հոգարարձու և նուիրատու թեմական դպրանոցի սեղւոյն. թ. 1964:

— Օրհնութեան և քաջակերութեան յանուն պ. Սարգսի Իւղարշեանց Նուշեցոյ, որով հրաւիրեցաւ ի պաշտօն Հոգարարձութեան դպրանոցին Նուշոյ. թ. 1965:

— Նորհաւորական յանուն երկոյ միաբանից Կիլիկիոյ Գեր. Տ. Մկրտիչ Եպիսկոպոսի Ա. հայկական, Արարհամ Եպիսկոպոսի Մամիկանեան և Բարեշն. Ներսէս վարդապետի Դանիէլեան, որ ի Կ. Պոլիս, յազգս բարեխաջող ընտրութեան Աթուղիկոսի Տանն Կիլիկիոյ յանձին Գեր. Տ. Մկրտչ Եպիսկոպոսի երկուցեան. թ. 1991:



### ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՌԻԹԵԱՆ ԻՍԿՈՒԹԻՒՆԸ

Գ.

Ի՞նչ է Կարգել Քրիստոս.

Իմ քարոզութիւնը սկսեց Փրկիչն այն կէտից, ուր կանգ էր առել Յովհաննէս

Մկրտիչը: Երբ նա հրապարակ ելաւ, առիտներ առաջ Յորդանանի ափերին մի մեծ շարժում էր սկսուել. հրեայ ժողովուրդը գունտագունտ այնտեղ էր դիմում՝ նոր մարդարէի քարոզը լսելու: Նորա լսածը նոր բան չէր. «Աստուծոյ արքայութիւնը մտեցել է» — քանի քանի մարդարէներ այդպէս ասել, անցել դնացել էին, և խոստացուած արքայութիւնը չկար ու չկար. մեսիականեր նոյն իսկ յայտնուել էին վերջին ժամանակ, որոնք արդէն եկած էին համարում արքայութիւնը և իրենք իրրե բերողը ներկայանում: Բայց մինչ գարաւոր ստրկութեան շղթաների տակ հեծող խեղճ մտեւանդ ժողովուրդը սպասում էր, թէ ահա նորա երկնքից զօրքեր կիջնեն, մի ակնթարթում կխորտակեն արեւելքասասան Հռոմի զօրութիւնը, Սիոնի բարձունքի վերայ Դաւթի գահը կհաստատեն, և Իսրայէլի հին փառքը հազարապատիկ աւելի պարծութեամբ կվերականգնի, շուրջն ամբողջ երկիրը կծաղկի, մեղր ու կաթ կբղխէ, երանութեան հովիտ կգառնայ Աբրահամի որդւոց համար՝ հռոմայեցի զինուորները գալիս էին, նիզակի ծայր հանում կամ դէպի բանա ու կախաղան տանում կարծեցեալ ողորմելի մեսիաներին, ու ոսկի երազները յօդս էին ցնդում: Եւ սակայն զուր տեղը չէր այդ ժողովուրդը բուռն փափագով Յովհաննէսի շուրջը խմբուում այն, նա հին քարոզն էր կրկնում, բայց որչափ տարբեր ոգւով ու եղանակաւ, քան միւս իւր ժամանակի բազմապիսի քարոզիչները: Նորա արտաքին երևոյթն ևս վիպարում էր, որ նա տարբեր մարդ էր. առաջին մեծ մարդարէի՝ Եղիայի, նման անապատում էր նա սպրում և անապատից ստանում իւր սնունդն ու հագուստը. մարդկային հասարակութիւնից ոչ մի սպասելիք չունէր՝ չէր էլ կամենում որեւէ բանով պարտական մնալ սորան: Իսկ երբ ելնում էր մարդոց առաջ և բաց էր անում բերանը երկնաւոր թագաւորի պատգամները յայտնելու համար՝ ծանր մուրճի հարուածների պէս էին ընկնում նորա խօսքերը ունկնդիրների կրծքի վերայ, ինչպէս կրակ այրում